«Հակատուբերկուլոզային հիմնարկությունների բուժքույրերի աշխատանքի առանձնահատկությունները»

2023 թվականից կրկնողաբար Երևան քաղաքում ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ կողմից կանցկացվի «Հակատուբերկուլոզային հիմնարկությունների բուժքույրերի աշխատանքի առանձնահատկությունները» թեմայով դասընթաց: Ծրագիրը հաստատվել է ՀՀ առողջապահության նախարարի հրամանով: Թիրախային լսարանը՝ տուբերկուլոզային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման կազմակեպություններրի բուժքույրեր: Մասնակիցներին կշնորհիվի ՇՄԶ 20 տեսական և 30 գործնական կրեդիտ: Լրացուցիչ տեղեկատվության համար զանգահարել 010235310, 011300088 հեռախոսահամարներով:

## ԾՐԱԳԻՐ

### «ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՈԶԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՔՈՒՅՐԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ

2023 թվականից կրկնողաբար, ք. Երևան (ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, «Թոքաբանության ազգային կենտրոն» ՊՈԱԿ)

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ

| | | |
|---|---|---|
| **Շաբաթ 1** | | |
| **Օր 1** | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Տուբերկուլոզի մասին տեսական հիմունքները: ՏԲ-ի համաճարակաբանական իրավիճակն աշխարհում և Հայաստանում | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Մասնակցություն առավոտյան շրջայցերին՝ բաժանմունքների բժիշկների և ավագ քույրերի հետ միասին:<br>Մասնակցություն հերթափոխի ընդունման-հանձնման աշխատանքներին, համապատասխան գրանցամատյաններում կատարվող գրանցումներին:<br>Մասնակցություն բաժանմունքներում համաճարակաբանի շրջայցերին, հիվանդասենյակների, բուժքույրական անձնակազմի համազգեստների մաքրության ստուգմանը | Լյուբով Նիկոլայան |
| **Օր 2** | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Տուբերկուլոզի պատճառագիտությունը, ախտաբանական անատոմիան, դասակարգումը: Գաղտնի ՏԲ վարակ | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Մասնակցություն դեղորայքի ընդունման-հանձնման աշխատանքներ՝ ավագ և ցերեկային բուժքույրերի հետ: | |

| | | |
|---|---|---|
| | Մասնակցություն բուժող բժշկի նշանակումներն իրականացման աշխատանքներին, դեղորայքի ժամանակին ընդունման հսկողությանը պացիենտների կողմից:<br>Կատարել ջերմաչափումներ, ինչպես նաև պացիենտների զարկերակային ճնշման չափումներ՝ համաձայն ժամանակացույցի:<br>Իրականացնել պացիենտներին նշանակված միջմկանային և միջերակային ներարկումներ՝ կատարելով համապատասխան գրանցումներ | |
| Օր 3 | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Տուբերկուլոզի հայտնաբերման եղանակները: Տուբերկուլոզի նկատմամբ խոցելի խմբերը | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Կատարել պացիենտների հետազոտությունների կազմակերպման աշխատանքներ՝ համաձայն բժշկի նշանակումների<br>Մասնակցություն էնդոսկոպիկ միջամտություններին ենթակա պացիենտների նախապատրաստելուն, Էնդոսկոպիկ սարքերի մանրէազերծմանը, վիրակապական խծուծների պատրաստմանը:<br>Մասնակցություն էնդոսկոպիկ միջամտությունների անցկացմանն ընդհանուր տեղեկատվական գրանցամատյանում | Լյուբով Նիկոլայան |
| Օր 4 | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Տուբերկուլոզի ախտորոշման արդի եղանակները: Տուբերկուլոզի ախտորոշման ալգորիթմը | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Մասնակցություն Կենտրոն ընդունված պացիենտների նախապատրաստմանն առաջնային բուժզննման:<br>Ըստ ընդունարանի բժշկի ցուցման՝ հիվանդին ուղեկցել համապատասխան բաժանմունք:<br>Ուսումնասիրել Կենտրոն ուղորդված պացիենտների ուղեգրերը և ներկայացնել ընդունարանի բժշկին՝ համապատասխան տեղաբաշխում կատարելու նպատակով | Լյուբով Նիկոլայան |
| Օր 5 | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Ալերգիան և ընկալունակությունը (իմունիտետ) տուբերկուլոզ հիվանդության հանդեպ:<br>Տուբերկուլինի զարգացման պատմությունը | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Կենտրոնի դիսպանսեր հսկողության և նեղ մասնագիտական օգնության բաժնում նախապատրաստել այցելուներին համապատասխան բուժզննման:<br>Ըստ բժշկի ախտորոշման՝ պացիենտներին ուղեկցել համապատասխան բաժանմունք:<br>Լրացնել պացիենտների ամբուլատոր քարտերի/պատմագրերի անձնական տվյալները և ներկայացնել բժշկին | Լյուբով Նիկոլայան |
| Շաբաթ 2 | | |
| Օր 1 | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>Մանտուի փորձի առավելությունները: Փորձի կիրառման ցուցումներն ու հակացուցումները | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Մասնակցություն Կենտրոն դիմած քաղաքացիների և ուղղորդված հիվանդների վերաբերյալ տեղեկատվական բազայի վարման աշխատանքներին: | Լյուբով Նիկոլայան |

| | | |
|---|---|---|
| | Մասնակցություն պացիենտներին հետազոտությունից հետո համապատասխան գործիքների ու սարքավորումների ախտահանմանը:<br>Մասնակցություն հետազոտությունների փորձանմուշները լաբորատորիա փոխանցելուն,փորձանմուշի արդյունքները լաբորատորիայից վերցնելուն, պատմագրում փակցնելուն | |
| Օր 2 | | |
| 2 ժամ | Մանտուի փորձը դնելու տեխնիկան, գնահատումը, հնարավոր սխալները | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Մասնակցություն՝ պացիենտներին վիրահատություն իրականացնելու նպատակով ներերակային կաթետերի տեղադրմանը, կարդիոմոնիտորի, էլեկտրոդների միացմանը, շնչափողի ինտուբացիային:<br>Մասնակցություն արյան և պլազմայի ներարկումներին<br>Մասնակցություն (բժշկի հետ) պացիենտի էքստուբացիայի գործընթացին:<br>Մասնակցություն վիրահատված պացիենտին ԻԹԲ հիվանդասենյակ տեղափոխմանը | Լյուբով Նիկոլայան |
| Օր 3 | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>ՏԲ հիվանդության զարգացման ռիսկային գործոնները: ՄԻԱՎ-ի և ԴԿ-ի ազդեցությունը ՏԲ-ի համաճարակաբանության վրա | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Մասնակցություն վիրահատությունից հետո համապատասխան գործիքների ու սարքավորումների ախտահանմանը:<br>Մասնակցություն համապատասխան գրանցումների կատարման կարգին՝ պացիենտի անզգայացման, ինչպես նաև վիրահատության ընթացքում օգտագործված դեղորայքի վերաբերյալ | Լյուբով Նիկոլայան |
| Օր 4 | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>ՏԲ հիվանդության կանխարգելման հիմնական սկզբունքներն ազգաբնակչության շրջանում: ԲՑԺ պատվաստում: Հետպատվաստային ալերգիայի տարբերակումը | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Մասնակցություն յուրաքանչյուր պացիենտի համար անհատական, հատուկ սննդակարգի կազմմանը, դրա պատշաճ և ժամանակին ընդունման հսկողության վարմանը, համապատասխան գրառումների կատարմանը հիվանդության պատմագրերում:<br>Մասնակցություն հատուկ խնամքի կարիք ունեցող հիվանդների խնամքին, նրա կողմից օգտագործման ենթակա իրերի ախտահանմանը, այլ բաժանմունք ուղեկցելուն, ժամանակին սնվելուն և դեղերի ընդունմանը, սանիտարահիգիենիկ վիճակի հետևելուն | Լյուբով Նիկոլայան |
| Օր 5 | | |
| 2 ժամ | **Դասախոսություն**<br>ՏԲ հիվանդության բուժման հիմնական սկզբունքները: Հակատուբերկուլոզային պատրաստուկներից առաջացած անցանկալի երևույթները | Լյուբով Նիկոլայան |
| 3 ժամ | **Գործնական աշխատանք**<br>Մասնակցություն բաժանմունքներում իրականացվող նմուշառումներին՝ արտաքին միջավայրի և բժշկական գործիքների մանրէաբանական հետազոտությունների նպատակով: | Լյուբով Նիկոլայան |

| | | |
|---|---|---|
| | Մասնակցություն շաբաթական կտրվածքով համաճարակաբանին ներկայացվող հավետվությանը՝ բաժանմունքներում արձանագրված հակահամաճարակային ռեժիմի խախտումների և դրանց վերացմանն ուղղված աշխատանքների վերաբերյալ | |

Թիրախային լսարան՝ տուբերկուլոզային բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման կազմակեպությունների բուժքույրեր:
Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ 1-25 հոգի: